ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ

(1840-ական թվականներ)

ՎԱԼԵՐԻ ԹՈՒՆՅԱՆ

Անդրկովկասը ռուսական կայսրության կազմում ամրապնդելու ուղղությամբ XIX դ. առաջին կեսին ձեռնարկված միջոցառումների թվում կարևոր տեղ են գրավում երկու ակտեր՝ 1840 թ. կառավարման ռեֆորմը և 1845 թ. փոխարքայության ստեղծումը։ Կայսրությունում հատուկ վարչական միավորի ստեղծման պատճառների, նպատակների ու ընթացքի հետազոտումը դգալի նշանակություն ունի այդ հեռավոր ծայրամասում ինքնակալության քաղաքականությունը ճիշտ հասկանալու համար։

Ռուսաստանի կազմի մեջ Անդրկովկասի մտնելն առաջադիմական նշանակություն ունեցող իրադարձություն էր, որի շնորհիվ երկրամասի ժողովուրդների կյանքում արմատական բեկում կատարվեց։ Ռուսական հասարակության քաղաքակրթության աստիճանը համատեղ զարգացման որոշիչ գործոն դարձավ։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկներն արժեքավոր դիտողություններ են կատարել կառավարման ձևերի մասին և ժողովուրդների հարաբերությունները պայմանավորել են արտադրողական ուժերի, աշխատանքի բաժանման և ապրանքափոխանակության կարգավորվածության զարգացման մակարդակով։ Նրանք ընդգծել են, որ պատմության մատերիալիստական ըմբռնումը պահանջում է հայեցակետերն ուսումնասիրել տնտեսական գործոնների հետ սերտ փոխկապակցված, որոնք էլ պայմանավորում են դրանց բնույթը[1]։ Վ. Ի. Լենինը ցույց է տվել պատմական դարաշրջաններում կայսերական քաղաքականության բովանդակության տարբերությունը։ Նա ընդգծելով կայսրությունները քայքայող հանգամանքները, այդ քաղաքականության էությունը բնութագրել է իբրև չքողարկված հարստացման համակարգ։ Վ. Ի. Լենինը մեծ ուշադրություն է դարձրել գաղութ և ծայրամաս հասկացությունների բացահայտմանը և կապիտալիստական հարաբերությունների առաջացման գործում դրանց դերին։ Նա նշել է, որ Կովկասի գաղութացման պրոցեսը սկսվել է XIX դ. 80-ական թվականներին[2]։

Խնդրո առարկա պրոբլեմը պատմագիտության մեջ տարբեր գնահատականների է արժանացել։ Ազնվականական պատմագիտության հիմնական կարծիքն ամփոփված է 1840 թ. վարչական ռեֆորմի հաստատակարգի քննարկման մեջ, բայց առանց դրա դասակարգային նպատակները բացահայտելու[3]։ Կ. Կոմպանսկին եզրակացրել է, որ վերափոխման բովանդակությունը կազմել է անդրկովկասյան ժողովուրդների համար քաղաքացիական կառավարման երկու ձևերի՝ «հատուկ» և «ամուր կարգի» մտցնելը։ Նրա կարծիքով ստեղծված ապարատի ծանրաշարժությունը պայմանավորել է ռեֆորմի վերացումը[4]։ Միապետական Մ. Կորֆը դրույթ է առաջ քաշել երկրամասում կառավարության քաղաքականության՝ «տատանումներին» և «հեղա-

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 3, с. 19, 20; т. 27, с. 240, 241, 402; т. 37, с. 394; т. 39, с. 82.

[2] В. И. Ленин, ПСС, т. 3, с. 593—596; т. 16, с. 224; т. 30, с. 166; т. 32, с. 277.

[3] «Исторический очерк распространения и устройства русского владычества под Кавказом и в Закавказье», СПб., 1851, с. 83.

[4] «Кавказский календарь», Тифлис, 1867, с. 393, 394, 397.

շրջումներին» ենթարկվածության մասին՝ համաձայն կառավարիչների տեսակետների։ Նա իշխանության վերակառուցման թերությունների պատասխանատվությունը վերցրել է իշխանության բարձրագույն խավի վրայից և այն դրել առանձին անձնավորությունների վրա[5]։ Վ. Իվանենկոն հաստատակարգի մեջ միայն կառավարման «խայտաբղետության» վերացման պահանջարկ է տեսել[6]։

Այդ հարցի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել նաև բուրժուական պատմաբանները։ Գ. Եվանգուլովը «նոր հաստատություններին» կաղմակերպումը համարել է մանրազնին մտածված միջոցառում, որը դժվարությունների է հանդիպել բյուրոկրատիզմի հետևանքով։ Ստեղծված մարմինների լիարժեք գործունեությունը նա կապում է Կովկասի փոխարքա Մ. Վորոնցովի օրոք տեղական բնակչությունից աստիճանավորներով քաղաքացիական պաշտոնների փոխարինման հետ, որոնց նա անվանում է «նոր մարդիկ»[7]։ Զ. Ա-վալովը կառավարման վերափոխումները բացատրում է երկրամասի կյանքում ինքնակալության ռեֆորմատորական «դերով», ինչպես նաև սոցիալական հարաբերությունների «ապաֆեոդալականացման» քաղաքականությամբ։ Նրա կարծիքով վերին խավերի դժգոհությունը ինքնակալությանը պրդեց հրաժարվելու «դեմոկրատական փորձերից»[8]։ Մ. Լյալինը կառավարության գործունեությունը դիտում է իբրև «միասնական պետական իշխանության» ստեղծում, որը տեղական բնակչությանը «հանգստություն» տվեց[9]։

Սովետական պատմագիտության մեջ 1840 թ. ռեֆորմի լուսաբանման հարցում կա երկու տեսակետ։ Պատմաբանների մի մասն այն գնահատել է բացասաբար՝ իբրև ֆեոդալական «կամայականության» փոխարինում չինովնիկականով, իբրև կառավարումը քայքայած «անհաջող փորձ»[10], մյուսներն այն համարել են վարչական կառուցվածքի և օրենսդրության միասնականացմանը հանգեցրած որոշակի առաջընթաց[11]։ Մի շարք հետազոտողներ այն գնահատել են իբրև ցարիզմի գաղութային քաղաքականության հերթական փուլ[12], բայց ոմանք էլ այն բնութագրել են իբրև ինքնակալության քաղաքականության նոր շրջան, երբ Անդրկովկասը սկսեց դիտվել պետության մաս, իսկ հետո՝ ծայրամաս[13]։

---

5 «Русская старина», 1901, т. 101, с. 25, 26, 33—39.

6 В. И. Иваненко, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, с. 379.

7 Г. Г. Евангулов, Местная реформа на Кавказе, СПб., 1914, с. 10—15.

8 З. Авалов, Армяне («Формы национального движения в современных государствах»), СПб., 1910, с. 511, 512.

9 «Окраины России», 16. VII. 1906.

10 М. К. Рожкова, Политика царского правительства на Ближнем Востоке во второй четверти XIX века и русская буржуазия, М.—Л., 1949, с. 282; Н. П. Ерошкин, Крепостническая политика самодержавия и его политические институты, М., 1981, с. 185; Г. Х. Арутюнян, Социально-экономическая политика царизма в Армении и Азербайджане в 40—50 гг. XIX в. (автореферат канд. дис.) Ереван, 1950, с. 7.

11 М. А. Адонц, Экономическая политика царизма в Восточной Армении в XIX в., Ереван, 1957, с. 105; А. Ш. Мильман, Политический строй Азербайджана в XIX—начале XX века, Баку, 1966, с. 123, 124; Г. В. Хачапуридзе, К истории Грузии первой половины XIX века, Тбилиси, 1950, с. 430.

12 «Колониальная политика Российского царизма в Азербайджане», ч. I, М.—Л., 1936, с. 23—25; Վ. Ա. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, մաս Ա, Երևան, 1940, էջ 154, 157; А. Н. Сургуладзе, Прогрессивные последствия присоединения Грузии к России, Тбилиси, 1982, с. 63.

13 В. Г. Туняи, Административная и экономическая политика самодержавия в Восточной Армении от Туркманчайского мира до Крымской войны. 1828—1853 гг.

Փորձենք հետազոտել Անդրկովկասի կառավարման ուղղությամբ վերապաս մարմինների կատարած վերափոխումները, բացահայտել ռեֆորմի վրա աղդած գործոնները, քննել 1840 թ. հասարակարգի և Կովկասյան փոխարքայության ստեղծման նպատակները։ Հոդվածի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XIX դ. 40-ական թվականները, երբ ավարտվեցին ինքնակալության կողմից Անդրկովկասը կայսրության կազմի մեջ ընդգրկելու ուղղությամբ կազմակերպական ձևերի որոնումները։

XIX դ. 30-ական թվականների վերջերին Անդրկովկասը մնում էր որպես ռուսական պետության՝ կառավարման տարբեր ոլորտներում չկարգավորված տիրույթ։ Իշխանության քաղաքացիական ձև գոյություն ուներ Վրաստանում, Իմերեթիայում և Հայկական մարզում, իսկ մահմեդական մարզերում կառավարման թելերը կենտրոնացված էին զինվորական պարետների ձեռքերում. գոյություն ունեին նաև վասալական տիրույթներ՝ Մինգրելիա, Աբխազիա և այլն։ Իրավական բնագավառում ղեկավարվում էին ռուսական ու վրացական օրենսդրություններով և շարիաթի դրույթներով։ Չկարգավորված էին մնում ֆինանսական հարցերը (դրամաշրջանառությունը, հարկերը, կապալները, բաժերը)։ Անդրկովկասյան դավանանքների (հատկապես շիա և սյունի) գործերի ղեկավարումը արդյունավետ չէր։ Պրոբլեմի այդ ամբողջ համալիրը կառավարման ռեֆորմը նախապատրաստող անդրկովկասյան հանձնաժողովը դրեց ինքնակալության առաջ[14]։

1839 թ. դեկտեմբերին երկրամասի բարեկարգման անդրկովկասյան կոմիտեն[15] քննարկեց հանձնաժողովի նախագահ սենատոր Պ. Գանի ներկայացրած «Անդրկովկասյան Ռուսաստանի կառավարման մասին կանոնադրության նախագիծը»։ Պ. Գանը նախատեսել էր երկրամասի գլխավոր կառավարչով ներկայացված գլխավոր վարչության և գլխավոր կառավարչության կազմակերպում։ Կառավարչության մեջ մտնող գլխավոր կառավարիչը (նախագահողը), Թիֆլիսի ռազմական նահանգապետը և հինգ աստիճանավորները պետք է մարմնավորեին ներքին գործերի, ֆինանսների, պետական գույքի, արդարադատության և արտաքին գործերի մինիստրների «միացյալ իշխանությունը»։ Կայսերական օրենսդրության տարածումը ամենուրեք նախատեսվում էր անցկացնել առանց որևէ արգելքի։ Դրական նախատիպի օրինակ էր մատնանշվում «ռուսական դատավարության» լիակատար մուծումը Հայկական մարզ (որտեղ քրեական գործերը նախկինում ենթակա էին ռազմական դատարաններին), ինչպես նաև մասնակիորեն երկրամասի մահմեդական շրջանները։ Երկրամասը բաժանվում էր Վրացա-իմերեթական և Կասպիական նահանգների (առաջինի բնակչությունը հաշվվում էր 401600 քրիստոնյա և 136600 մահմեդական, իսկ երկրորդինը՝ համապատասխանաբար 40600 և 453200)։ Նահանգային-մարզային կառավարում էր նախատեսվում Վրացա-իմերեթական նահանգում, որտեղ առանց ատենական տեղերի մտնում էր Հայկական մարզը, գավառային՝ Կասպիական նահանգում։ Աղգային-տարածքային սահմանազատումը պայմանավորվում էր պետական խորհրդի 1835 թ. մայիսի 15-ի որոշմամբ։ Դրանով կարգադրվում էր Անդրկովկասի կառավարման բարեկարգման ընթացքում, նկատի ունենալով բնակիչների աշխարհագրական-կրոնական մերձավորությունը և քաղաքացիության աստիճանը, միայն երկու նահանգների կազմակերպում՝ «ավելի լավ հսկողության» և ծախսերի կրճատման նպատակով։ Պ. Գանը, ձգտելով հաշվի առնել էթնիկական ռեալությունները, հնարավոր էր համարում Հայկական մարզի և Ղարաբաղի

(автореферат канд. дис.), Ереван, 1982, с. 12, 13, 19, 20; Н. С. Кинялина, Административная политика царизма на Кавказе и в Средней Азии в XIX в. («Вопросы истории», 1983, № 4, с. 47).

14 Կազմակերպվել է 1837 թ.։

15 Կոմիտեն կազմված էր ռազմական, ֆինանսների, պետական գույքի, ներքին գործերի և արդարադատության մինիստրներից։

մարզերի միացման միջոցով երրորդ նահանգի կազմակերպումը։ Սակայն աստիճանավորների հաստիքային կազմի պակասը, կառավարման ծախսերը, Շուշիի և Երևանի միջև ձմեռային հաղորդակցության դժվարությունները, ինչպես նաև պետական խորհրդի որոշումը նրան դրդեցին այդ առաջարկության կատարումը կախման մեջ դնել կառավարության հայեցողությունից։

Երկրամասի առաջարկվող կառավարումը, նախագծի «հիմունքների» համաձայն, նախատեսում էր երեք խնդիրների «աստիճանական» լուծում. համանահանգային հաստատության հիման վրա կառավարման միասնության ստեղծում, անդրկովկասյան ժողովուրդների «մերձեցում»՝ «միմյանց և Ռուսաստանի հետ». ազգային տարբերությունների մասին «մտքի ոչնչացում»։ Ամբողջությամբ առած, նախատեսվում էր հաղթահարել Անդրկովկասի «օտարացումը» և այն «ավելի ու ավելի ձուլել» պետության հետ (այդ պատճառով էլ երկրամասում գլխավոր դատարան կազմակերպելու մասին Պ. Գանի առաջարկը չհաստատվեց)։ Նախագիծն անտեսում էր ծայրամասի ազգային և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները։ Այն ելնում էր երկրամասը ամրապնդելու և յուրացնելու կայսերական շահերից։ Դրական էր տեղական բնակիչներին միասնական երկրի քաղաքացիներ ճանաչելը։

1839 թ. դեկտեմբերի 19-ին կայացավ Անդրկովկասյան կոմիտեի նիստը՝ նախագծի մասին մինիստրների կարծիքների համատեղ կշռադատման համար։ Քննարկման ժամանակ բախվեցին երկու հակադիր միտում. Անդրկովկասում կառավարման գաղութային համակարգ մտցնե՞լ, թե՞ երկրամասը դիտել երկրի բաղկացուցիչ մաս։ Ֆինանսական գերատեսչության ղեկավար Ե. Կանկրինի դիտողություններում արտացոլվել էր առաջին միտումը[16]։ Նա հանդես եկավ հօգուտ մի նահանգի ստեղծման՝ թույլ չտալու համար երկրամասի «օտարացումը», իսկ մահմեդական մարզերում առաջարկեց թողնել ասիական կառավարումը։ Երկրորդ միտումի ներսում առկա էր երկու տեսակետ։ Դրանցից մեկի համաձայն նախատեսվում էր անմիջապես անցնել կառավարման համանահանգային սիստեմին, իսկ ըստ մյուսի՝ աստիճանաբար։ Առաջին տեսակետն արտացոլվել էր Պ. Գանի նախագծում, իսկ երկրորդն ակտիվորեն պաշտպանում էր Անդրկովկասյան երկրամասի գլխավոր կառավարիչ Ե. Գոլովինը։ Նա կոմիտեի անդամների հետ անձնական տեսակցությունների ժամանակ նրանց իրաղեկ էր պահում ամենուր քաղաքացիական սիստեմ մտցնելու, մահմեդական մարզերում ռուսական օրենսդրության վաղաժամանակության և միայն Վրաստանի օրինակով ռեֆորմի «հետևանքները» ստուգելու իր ցանկության մասին։ Ե. Գոլովինն ընդգծում էր, որ երկրամասը դեռ «զենքը ցած չի դրել», և որ Փոքր Ասիայում քաղաքական լարված իրադրությունը կարող է ազդել Անդրկովկասի վրա։ Գլխավոր կառավարչի դիրքորոշումը Կովկասյան կորպուսի զինվորականների շահերի արտահայտությունն էր, զինվորականներ, որոնք հանդես էին գալիս իրենց գործունեությունը քաղաքացիական վարչությամբ սահմանափակելու դեմ։

Ե. Գոլովինի փաստարկներն արժանացան մինիստրների աջակցությանը։ Նրանք, հաշվի տանելով, որ դասային հարաբերությունների և պետական ու անձնական սեփականության պահպանության ապահովվածության խնդիրը լուծված չէ, հանդես եկան Վրաստանում, Իմերեթիայում և Հայկական մարզում նահանգական կառուցվածք մտցնելու, իսկ երկրամասի մնացած մասում՝ «կրճատված» կամ «անցումային» կառավարման ստեղծման օգտին։ Կոմիտեն որոշեց նախագիծը հանձնել լրացուցիչ մշակման՝ Անդրկովկասում համանահանգային կարգի աստիճանական տարածման հիման վրա և Մ. Պոզենից (կոմիտեի գործերի կառավարիչ), Պ. Գանից ու Ե. Գոլովինից կազմել նոր հանձնաժողով։ Նիկոլայ I-ը, ստորագրելով կոմիտեի 1839 թ. դեկտեմբերի

---

16 Центральный гос. исторический архив СССР (далее ЦГИА СССР), ф. 1268. оп. 26, д. 1, л. 78.

16-ի նիստի մատյանը, խմբագրական աշխատանքների ավարտի ժամկետ նշանակեց 1840 թ. մարտի 1-ը։ Այսպիսով, հաղթեց երկրամասը պետության մաս դիտելու միտումը[17]։

1840 թ. հունվարի 9-ին Պ. Դանը ամենահպատակ զեկուցագրով Նիկոլայ I-ին փաստաթղթեր ներկայացրեց Անդրկովկասի ֆինանսական վիճակի մասին, որոնք նաև առաջարկություններ էին պարունակում սոցիալական իրավունքների և տեղական դավանությունների մասին։ Հարկային սիստեմի ուսումնասիրությունը սենատորին բերել էր այն եզրակացության, որ գանձարան կատարվող մուծումները «անհամաչափ են» երկրամասի հնարավորություններին։ Պ. Դանն առաջարկում էր մտցնել «հողի արգասիքներով» համախառն հարկման սիստեմ, որն ընդունված էր Հայկական մարզում։ Նա շոշափում էր նաև առևտրական ու լեռնային գործերին, պետական գույքի կառավարմանը, քաղաքային և տեղական պարտությունների, պետական տուրքերին վերաբերող հարցեր։ Պ. Դանի ներկայացրած փաստաթղթերում ուշադրություն էր դարձվում նաև հոգևորականության վրա։ Պահանջվում էր ուժեղացնել Վրաստանի էկզարխի ազդեցությունն Իմերեթիայի, Մենգրելիայի և Գուրիայի հոգևոր պետերի վրա, ակտիվացնել լեռնականների շրջանում քրիստոնյա միսիոներական գործունեությունը, գանձարան ընդունել տեղական ուղղափառ հոգևորականությունից «շատ ժամանակ խլող» եկեղեցական գույքը։ Ընդգծելով հոգևոր իշխանությամբ հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածները միացնող Հայոց կաթողիկոսի նշանակալից դերը, Պ. Դանը կոչ էր անում ճշտիվ կատարել 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրությունը և դրանով իսկ կանխել կամ «ժամանակին կանգնեցնել պետության շահերին չհամապատասխանող հատուկ ազդության վերածնունդը»[18]։ Մահմեդական կրոնի գործերի ղեկավարման և արդյունավետ վերահսկողության նպատակով Պ. Դանն առաջարկում էր ստեղծել կենտրոնական կառավարական հիմնարկություն։

«Անդրկովկասյան երկրամասում ֆինանսական բնագավառի կազմակերպման» նախագծի մասին իր կարծիքը Ե. Գոլովինը ներկայացրեց 1839 թ. դեկտեմբերի 6-ին և 1840 թ. հունվարի 30-ին ռազմական մինիստրին ուղղած գրություններում։ Նա մերժում էր Անդրկովկասում «ճորտատիրական կանոնադրություն» մտցնելու և տեղական գյուղացիների մասին կանոնադրություն հրապարակելու վերաբերյալ Պ. Դանի առաջարկությունները, պատճառաբանելով, որ երկրամասը «լավ վիճակի մեջ չի դրվել»։ Նա նշում էր, որ ճորտատիրական հարաբերություններն այստեղ Բելոռուսիայի նման կհանգեցնեն հողագործների պարտությունների ավելացման, այսինքն՝ սոցիալական լարվածության աճի։ Նրա կարծիքով պետական գույքի ստուգման, կամերալ ցուցակագրման և հողային բաժնեհաշվման իրականացումը կպահանջեին տարբեր հանձնաժողովների գործունեություն և զգալի ժամանակ։ Վրաստանի իշխանական և ազնվականական ընտանիքների իրավունքների որոշման հարցը Ե. Գոլովինը վերագրում էր «տեղական իրավունքների» պրոբլեմին, իսկ մահմեդական բարձր դասի իրավունքները, սխալ կերպով, ոչ թե ռուսական ազնվականության հետ «հավասարեցմանը», այլ «պատվավոր քաղաքացիության» նշաններ ստանալուն։ Նա չէր ընդունում կաթողիկոսության ինստիտուտի քաղաքական վնասակարության մասին Պ. Դանի տեսակետը։ Վրաստանում եկեղեցական սեկուլյարիզացիան Ե. Գոլովինը համարում էր նախապատրաստում պահանջող միջոցառում, իսկ մահմեդական հոգևորականության դրությունը՝ արժանի կառավարության ուշադրությանը։ 1840 թ. փետրվարի

---

17 Նույն տեղում, թ. 75—77, ֆ. 561, ց. 1, գ. 142, թ. 20, Центр. гос. военно-исторический архив (далее ЦГВИА), ф. Военно-ученый архив. д. 6378, л. 62; В. Г. Тунян, Подготовка закавказской административно-судебной реформы 1840 г. и Восточная Армения («Вестник МГУ». История. 1981, № 5, с. 18).

18 ЦГИА СССР, ф. 1268, оп. 1, д. 104, ч. I, л. 47.

3-ին տնտեսական բնագավառի մասին Ե. Գոլովինի դիտողությունների հետ համաձայնեց Ե. Կանկրինը, որն առաջարկեց այստեղ նախատեսվող միջոցառումները իրագործել աստիճանաբար՝ «միանգամից չափազանց շատ բան չձեռնարկել»[19]։

Նախագիծը ներկայացվեց Անդրկովկասյան կոմիտեի եզրակացությանը[20]։

1840 թ. ապրիլի 10-ին Նիկոլայ I-ը հաստատեց «Անդրկովկասյան երկրամասի կառավարման համար օրենսդրական որոշումը»։ Կառավարումն ընդգրկում էր երեք աստիճան. առաջին՝ գլխավորը, որը ներկայացնում էին գլխավոր կառավարիչը, Թիֆլիսի ռազմական նահանգապետը և գլխավոր վարչության խորհուրդը, երկրորդ՝ նահանգային-մարզայինը և երրորդ՝ գավառայինը։ Գավառային դատարանները, քրեական և քաղաքացիական դատարանի պալատները կայսերական օրենսդրության հիման վրա կազմում էին իրավակարգի առաջին և երկրորդ աստիճանները։ Բարձրագույնը համարվում էր կառավարող սենատը։ Ստեղծվում էին վրացա-իմերեթական նահանգը, Կասպիական մարզը և Դերբենդի ռազմական օկրուգը։ Օրենսդրական որոշումը լրացնում էր կանոնադրությունների փաթեթը։ Այն նախատեսում էր Թիֆլիսում քաղաքային վարչության կազմակերպում (որպես երկրամասի վարչատնտեսական կենտրոն), զեմստվային պարհակների կոմիտեի ստեղծում, Անդրկովկասում ծառայող աստիճանավորներին արտոնությունների շնորհում և այլն[21]։

Մ. Պոզենի նախագծի «վերափոխումը» հանդիսացող նոր կարգը[22] ուժի մեջ էր մտնելու 1841 թ. հունվարի 1-ից։

Օրենսդրական որոշման և անդրկովկասյան հանձնաժողովի կանոնադրության համադրությունը հնարավորություն է տալիս բացահայտելու կարևոր նրբերանգներ։ Պ. Դանի նախագիծը նախատեսում էր ստեղծել կենտրոնացված ռեգիոնալ կառավարչություն, որտեղ վարչությունը օժտվելու էր գործադիր իշխանությամբ։ Վարչությունը պետք է դառնար «միացնող աստիճան» մինիստրությունների հետ, մինչդեռ ստեղծված խորհրդին տրվում էին միայն վերահսկողության ֆունկցիաներ և գլխավոր կառավարչին կից խորհրդակցական նշանակություն։ Երկու նահանգների փոխարեն կազմակերպվեց մեկը։ Կասպիական մարզը ստացավ կրճատված կառավարում։ Ատենական տեղերի քանակն ավելի քիչ էր ներկայացուցչական և իրավասու։ Օրենսդրական որոշումը միավորեց երկրամասը համապետական համակարգով կառավարելու կողմնակիցների հայացքները։ Այն նշանակալից թռիչք էր Անդրկովկասի բնակչության քաղաքացիական վիճակի կարգավորման մեջ։ Զինվորական պաշտոնյաները հեռացվեցին քաղաքացիական հաստիքներից։ Սեփականության և անձի օրենսդրական պաշտպանությունն ապահովվում էր։ Մահմեդական մարզերի բնակիչները ստանում էին քրիստոնյա բնակչությանը հավասար իրավունքներ և միաժամանակ ճանաչվում էին ռուսական կայսրության «հավատարիմ հպատակներ»։ Թույլատրվում էր առաջին աստիճանի դատարաններին մայրենի լեզվով խնդրագրեր տալ, վերացվում էին քրեական գործերով զբաղվող ռազմական դատարանները։ Երկրամասի բնակչության դրությունը ներքին նահանգների բնակիչների վիճակից որոշ չափով ավելի տանելի դարձավ, քանի որ այն ենթակա չէր զինակոչային ծառայության, ինչպես նաև չէր կրում ռուսական ճորտատիրական իրավունքի ծանրությունը։

Քաղաքացիական իշխանության բաժանումը ռազմականից, գործավարության և դատավարության միատիպությունը, ընդհանուր կառավարման

---

19 Նույն տեղում, ֆ. 561, ց. 1, գ. 201, թ. 54։

20 Նույն տեղում, թ. 1—55, 97—98, ֆ. 1268, ց. 1, գ. 104, մ. 1, թ. 1—77, 93—127։

21 «Полное собрание законов Российской империи» (далее ПСЗРИ), т. 15, СПб., 1841, № 18368—13971.

22 «Русская старина», 1900, т. 101, с. 37.

ստեղծումը, պետական իրավական ստատուտը, անդրկովկասյան ժողովուրդների հավասարեցումն ու մերձեցումը պայմանավորում էին ռեֆորմի առաջադիմական գծերը։ Սակայն տեղական ժողովուրդների առանձնահատկությունների, նրանց օրենսդրության (վրացական թագավոր Վախթանգի կոդեքսի գործողությունը դադարեցվեց) անտեսումը, վարչական ձևերի միասնության վրա չափից դուրս շեշտը դնելը և իշխանության մեխանիզմի բարդությունը սահմանափակում էին օրենսդրական որոշման դրական բովանդակությունը։

1840 թ. նոյեմբերին Անդրկովկասյան կոմիտեն եզրակացություն հանեց ֆինանսական նախագծի մասին։ Այն գտավ, որ նախագիծը եռակի նպատակ է հետապնդում՝ քաղաքացիական կառավարման, պետական գույքի և ֆինանսատնտեսական բնագավառների վերափոխում։ Օրենսդրական որոշման ընդունումը, զեմստվային և քաղաքային պարհակներով զբաղվող կոմիտեների բացումը, երկրամասի փոստային բնագավառի վերաբերյալ հաստատված նախագծի առկայությունը, մինիստրների կարծիքով, նշանակում էին առաջադրված միջոցառումների նշանակալից մասի պրակտիկ իրականացում։ Հարկային սիստեմից սպասվելիք եկամուտների «աննշանությունը» և տնտեսական համակարգի փոփոխության բացասական հետևանքների հնարավորությունը դրդեցին այդ բնագավառում Պ. Գանից «վերջնական նախագիծ» պահանջել։ Կոմիտեն հաշվի առավ «նորամուծությունների» ժամանակ ցնցումներից խուսափելու անհրաժեշտության մասին Ե. Կանկրինի կարծիքը[23]։

Տնտեսական ոլորտի վերակառուցման հետաձգումն ուղեկցվում էր հոգևորականության և դասերի հետ կապված հարցերի չլուծվածությամբ։ Դրանք 1840 թ. ապրիլի 30-ին «Անդրկովկասի բնակիչների քաղաքացիական հարաբերությունների որոշման մասին» բարձրագույն ռեսկրիպտով դրվեցին երկրամասի գլխավոր կառավարչի և գլխավոր վարչության խորհրդի վրա[24]։ Այսպիսով, Պ. Գանի նախատեսած վերափոխումների լայն ծրագիրը հանգեցվեց կառավարման ռեֆորմի առաջնահերթությանը։ Դրա պատճառը հասարակական հարաբերությունների վերակառուցման ժամանակ բարդություններից խուսափելու կառավարության ձգտումն էր։

Օրենսդրական որոշման գործունեության ուժեղացման նպատակով ձեռնարկվեցին մի շարք հատուկ միջոցներ։ Մահլային նահբները կառավարությունից հեռացվեցին, իսկ նրանց ֆունկցիաները փոխանցվեցին տեղամասային ատենակալներին՝ ռուսական աստիճանավորներից։ Ադրբեջանական ֆեոդալական դասի ստորին խավի ներկայացուցիչ աղալարները, որոնք առավել մոտ էին կանգնած ժողովրդին, հեռացվեցին գյուղերի կառավարումից։ Նրանց իշխանությունից զրկված 83 հազար գյուղացիներ պետականի ստատուս ստացան։ Այդ միջոցառումը նախատեսվում էր իրագործել նաև բեկերի նկատմամբ։ Պ. Գանի ճնշման տակ գլխավոր վարչության խորհուրդը Անդրկովկասում ռուս ճորտ գյուղացիների վաճառքի արգելումը ընդունեց իբրև անհրաժեշտության մատնանշում՝ զբաղվելու գյուղացիների պարհակների և կալվածատերերի հետ նրանց փոխհարաբերությունների հարցերով։ Բոլոր այդ մտցրված և ենթադրվող միջոցառումները շոշափում էին սոցիալական հարաբերությունների խճճված կծիկը, քանի որ վերաբերում էին տարբեր դասերի շահերին։

Իմերեթիայում, Օսեթիայում և Ադրբեջանի մի քանի շրջաններում սկսվեցին խմորումներ, որոնք հրահրում էին ֆեոդալական տարրերը։ Երկրամասի «ներքին անդորրի» համար պատասխանատու ժանդարմական կորպուսի վեցերորդ օկրուգի պետը նշում էր, որ «Անդրկովկասյան Ռուսաստանը» «դատական և վարչական ձևերի պարզեցում է» պահանջում։ Կացութաձևերի տարա-

---

23 ЦГИА СССР, ф. 1268, оп. 26, д. 2, л. 132—133 об.

24 Центральный государственный исторический архив Груз. ССР, ф. 2, оп. 1, д. 6851, л. 8—12.

սեռությունը, բնակիչների քաղաքացիության աստիճանը, ստեղծված ապարատի բարդությունը և աստիճանավորների ընչաքաղցությունը օրենսդրական որոշման գործունեության խոչընդոտներ էին դիտվում[25]։ Հարկերի գանձման ժամանակ չարաշահումների և պարհակների փոփոխության հետևանքով 1841 թ. հուլիսին Գուրիայում տեղի ունեցած մասսաների խոշոր ելույթը միայն ինքնակալությանը ստիպեց մտածելու դժգոհության պատճառների մասին[26]։ Ստեղծված դրությունը դարձավ ռազմական մինիստր, անդրկովկասյան կոմիտեի նախագահ Ա. Չերնիշևի և պետական քարտուղար Մ. Պոդենի վերաստուգման առարկա։ 1842 թ. օգոստոսին կայսրին հաշվետվություն ներկայացվեց։ Այնտեղ նշվում էր, որ կառավարման մինիստրական կարգ մտցնելը, ներքին նահանգների նման, «թուլացրեց» երկրամասի վարչության ղեկավարի իշխանությունը և չնպաստեց օրենսդրական որոշում մտցնելու վրա հսկողությանը։ Հաշվետվության հեղինակները գանում էին, որ «ռեֆորմի ընդհանուր ուղղությունն» իրագործող կոմիտեն վերափոխումների ընթացքի վրա հսկողությունը հանձնել է գերատեսչություններին, որոնք, իրենց հերթին, դա համարում էին նրա պարտականությունը։ Երկրամասում աստիճանավորների թիվը 1839—1841 թթ. 704-ից հասել էր 1311-ի։ Պետական գանձարանից քաղաքացիական ծախսերը ծածկելու համար, ռազմականից բացի, հարկ էր եղել հատկացնել ևս 151.316 ռ. արծաթով։ Թերություններ էին առկա նաև ապարատի մյուս աստիճաններում։ Այդ էին վկայում վերաքննիչների ստացած խնդրագրերը։

Խնդրագրերի և բողոքների քննությունը վկայում էր, որ բնակչության դժգոհության պատճառը ստեղծված ապարատի գործունեությունն էր և ոչ թե կառավարման հին ձևերին վերադառնալու ձգտումը։ Դրանցում տեղ էին գրավում սոցիալական փոխհարաբերությունների և ժողովրդական զանգվածների տնտեսական դրության հարցերը[27]։ Կառավարության առջև ծառացավ երկրամասի կառավարումը բարելավելու, հարկերի և դասերի դրության վրա ուշադրություն դարձնելու խնդիրը։ Ձևավորվեց կարծիք, ըստ որի «Անդրկովկասյան երկրամասի կառավարման նոր օրենսդրական որոշումը միայն ընդհանուր ցանց է, որի ներսում հարկ կլինի կատարել փոփոխություններ՝ հարմարվելով տեղի ժողովուրդների բարքերին ու սովորույթներին»[28]։ Սկսվեց օրենսդրական որոշման «ուղղումը»[29]։ 1842 թ. օգոստոսի 30-ին ստեղծվեց կառավարման գծով որոշումներ նախապատրաստող անդրկովկասյան կոմիտե, ինչպես նաև կայսրի գրասենյակին կից հինգերորդ բաժանմունք՝ հնարավոր ռեֆորմների «մշակման» համար[30]։ 1842 թ. նոյեմբերի 12-ին Նիկոլայ I-ը հաստատեց «Անդրկովկասյան երկրամասի գլխավոր վարչությանն ուղղված հրահանգը»։ Դրանում գլխավոր խնդիր էր համարվում քաղաքացիական կյանքը «միապետական սկզբունքներին» ենթարկելու հիման վրա երկրամասը կայսրությանը «մերձեցնելու» ուղղությամբ միջոցառումների անցկացումը։ Պարտավորեցվում էր օրենսդրական որոշմամբ առաջնորդվելով որոշել դասային հարաբերությունները, «հովանավորել» տեղական դավանությունները, դատական գործավարության մեջ հաշվի առնել բնակիչների առանձնահատկությունները, մտցնել կայսերական լուսավորություն։ Պահանջվում էր նախագիծ պատրաստել տեղական աշխարհազորի մասին և զեկույց՝ համապետական և տեղական օրենսդրության քննությանը ենթակա գործերի մասին։ Նշվում էր առաջին հերթին

---

25 Центральный государственный архив Октябрьской революции (далее—ЦГАОР), ф. 109, I экспедиция, 18440, д. 258, л. 151—156 об.

26 ЦГИА СССР, ф. 1018, оп. 3, д. 235, л. 18—32.

27 Центральный государственный архив военно-морского флота, ф. 19, оп. 4, д. 384, л. 11—63.

28 Отдел письменных источников государственного исторического музея (далее ОПИ ГИМ), ф. 254, оп. 1, д. 376, л. 275.

29 Պ. Դանին և Ե. Գոլովինին կայսրը հեռացրեց զբաղեցրած պաշտոններից։

30 ПСЗРИ, т. 17, отд. 1, № 16008.

երկրամասի ադրարային ուժերի զարգացման, այնտեղ ռուս կապիտալիստների և արհեստավորների վերաբնակեցման, հարկային սիստեմի վերակառուցման անհրաժեշտությունը[31]։

«Հրահանգը» հենվում էր «պաշտոնական ժողովրդայնության»՝ «ուղղափառություն, ինքնակալություն և ժողովրդայնություն», կայսերական տեսության եռանդամ բանաձևի վրա[32]։ Դրանում արտացոլվել էին նոր ռեալություններ՝ երկրամասը դադարեց «Անդրկովկասյան Ռուսաստան» դիտվելուց, բայց «մերձեցման և ձուլման» հարցի լուծումը նախատեսվում էր 1840 թ. օրենսդրական որոշման սահմաններում, չնայած և նրա դրույթներից նահանջներ էին թույլատրվում։ Գլխավոր վարչությունը դառնալու էր ցարիզմի օժանդակ մարմինը, որը հինգհոգի բաժանմունքին և անդրկովկասյան կոմիտեին պետք է օգներ՝ ծայրամասը կայսրության կազմում ամրապնդելու գործում։ Գլխավոր վարչության կազմը սահմանափակվեց հինգ անդամով, որոնցից երեքը զինվորականներ էին (նրանք կրկին քաղաքացիական պաշտոններ զբաղեցնելու հնարավորություն ստացան)։ Լեռնային ժողովուրդների մոտ վերստեղծվեցին ռազմաքաղաքացիական վարչությամբ օկրուգները[33], ֆեոդալների պահանջների հաշվառման հիման վրա ցարիզմը իր սոցիալական հենարանի ամրապնդման կուրս վերցրեց։ Մահմեդական բարձր խավի (որին սկսեցին վերադարձվել արտոնությունները) դրությամբ սկսեցին զբաղվել երկու աղալարական և մեկ բեկական հանձնաժողովներ։ Իմերեթիայի ազնվականությանը խոստացան ստեղծել մարզ։ Սակայն գյուղացիությունը առաջվա նման պետք է կալվածատերերից կախման մեջ լիներ։ Նահանգում սկսվեց «միացյալ հարկ»[34] մտցվել, որը «տեղական հանգամանքների» պատճառով Կասպիական մարզում հետաձգվեց[35]։

Ինքնակալությանը հաջողվեց երկրամասում տիրող լարվածության պատճառները մեղմացնել, բայց ոչ վերացնել։ Մ. Պոզենը 1843 թ. Օսեթիայում տեղի ունեցած «դեպքերի» կապակցությամբ փորձում էր քննել իրադրությունն ապակայունացնող ազդակները։ Նա գրում էր. «Մեր դարում խռովություններն ու ապստամբությունները հրահրվում են երկու պատճառով՝ Արևմտյան Եվրոպայի քաղաքական զառանցանքներով և տեղական իշխանությունների ճնշիչ գործողություններով։ Առաջին պատճառը մեր կովկասյան տիրույթներում վրճռականապես գոյություն չունի, երկրորդը, դժբախտաբար, ուժեղ չափով գործում է։ Այդ եզրահանգման ճշտությունն ապացուցվում է Անդրկովկասում տեղի ունեցած գրեթե բոլոր ժողովրդական հուզումներով»[36]։ Անդրկովկասի և Եվրոպայի սոցիալ-տնտեսական մակարդակների տարբերության պատճառով մերժելով երկրամասի վրա հանրապետական ու սոցիալական գաղափարների ազդեցությունը, Մ. Պոզենը ամեն ինչի նախապատճառ էր համարում տեղական իշխանությունների թերամտությունները։ Նա, կառավարման մեխանիզմի ֆունկցիայի հաղորդակը տրամադրելով անդրկովկասյան իշխանություններին, գիտակցաբար պետական բարձրագույն մարմինների վրայից, որոնց գործունեությունը քննադատության չէր ենթարկվում, պատասխանատվությունը դնում էր ստորադաս ատյանների վրա։ Մ. Պոզենը հրաժարվում էր Անդրկովկասի բնակիչներին դիտել իբրև «ապստամբներ ու խռովարարներ», լուրջությամբ շրջանցում էր դժգոհության սոցիալ-տնտեսական պատճառները, ուշադրությունը կենտրոնացնելով միայն կառավարման վրա[37]։

---

31 «Наказ главному управлению Закавказским краем», СПб., 1842, с. 1—42.

32 «Десятилетие министерства народного просвещения: 1833—1843», СПб., 1864, с. 106.

33 Ջարո-Բելոկանի, Օսեթիա, Լեռնային, Տուշինո-Փշավո-Խևսուրիա։

34 Բաղկացած էր հիմնականում հողային, ծխային հարկերից և տեղական տուրքերից։

35 ЦГИА СССР, ф. 1018, оп. 3, д. 235, л. 27.

36 Рукописный отдел Государственной библиотеки им. В. И. Ленина (далее РО ГБЛ). ф. 330/I, п. 80, ед. 11, л. 116.

37 Նույն տեղում, թ. 116—117 հակ.։

Անդրկովկասում և նրան հարակից տարածքներում գործերի վիճակից անբավարարվածությունը կայսրին ստիպեց ընդունելու տեղական վարչության գործունեության կենտրոնացման անհրաժեշտությունը։

Կառավարչական տեսանկյունն անտեսել էր ինչպես երկրամասի ներսում, այնպես էլ պետության կենտրոնի հետ նրա սոցիալ-տնտեսական միասնությունը։ Նախատեսվում էր «միավորել» տեղական ժողովուրդներին և նրանց նախապատրաստել կայսրության հետ հնարավոր «ձուլմանը»։ Վարչական կառավարման միատիպությունը պետք է ամրապնդվեր հասարակական-տնտեսական կացութաձևերի միասնությամբ։ Այդ գործոնի նշանակությունը բացահայտում է կայսերական գրասենյակի 3-րդ բաժանմունքի «1844 թվականի բարոյաքաղաքական հաշվետվությունը»։ Նրանում ընդունվում էր ռուսական կայսրությունում ազգային ծայրամասերի առկայությունը՝ իրենց բնորոշ գծերով հանդերձ։ Հարավային ծայրամասի առանձնահատկություն էր դիտվում ընակչության տարակացութաձևությունը[38]։

Անդրկովկասում հսկողության կարիք էր զգում հոգևոր ոլորտը։ Քրիստոնեական ուսմունքի դոգմաների մեկնությունների ժամանակ ուղղափառ և հայկական եկեղեցիների միջև աստվածաբանական վեճերը, վերջինիս ծիսակատարությունների «աստորացումն» ու «ճնշումները», մասնավորապես Երևանում վերածվեցին հոգևորականների ձեռնամարտերի։ Վրաստանի էկզարխի՝ իր եկեղեցու առաջնությունը հաստատելու ձգտումը բացասաբար էր անդրադառնում ինքնակալության հեղինակության վրա, որը Անդրկովկասի ողջ բնակչության շրջանում «ազատ դավանությունը իրագործելու» պաշտոնական սկզբունքի կողմնակից էր[39]։ Այդ նույն ժամանակ տեղական վարչությունը, մահմեդականության վրա վերահսկողություն իրականացնելու նպատակով, բարձրագույն հոգևոր ատյանի բացակայության պայմաններում, սկսեց օգտագործել սյունիների և շիաների տարաձայնությունները[40]։

Բարեփոխման կարիք էր զգում արդարադատությունը։ «Դատարաններում ճշմարտություն չկա,— նշել է Անդրկովկասյան երկրամասի գլխավոր կառավարչի գրասենյակի դիրեկտոր Ս. Վասիլևսկին,— քանի որ դատողները և դատվողները միմյանց չեն հասկանում»[41]։ Մտահոգության տեղիք էր տալիս երկրամասի սոցիալական հարաբերությունների և տնտեսության վիճակը[42]։ «Ցանկանում եմ,— գրել է Նիկոլայ I-ը,— երկրամասում մեր տիրապետության ուժեղացումը, որը ես համարում եմ ծայրահեղ տատանվող և անկայուն»[43]։ Գերատեսչական ներգործության անջատվածությունը հաղթահարելու անհրաժեշտությունը և տեղում արդյունավետ կառավարչական ապարատը կենտրոնացնելու ձգտումը մարմնավորվեցին փոխարքայության ստեղծման մեջ[44]։ Նման պատասխանատու առաքելության իրագործման համար ընտրվեց ինքնակալի վստահությունը վայելող հայտնի զինվորական և քաղաքացիական բարձրաստիճան պաշտոնյա Մ. Վորոնցովը. 1844 թ. դեկտեմբերի 27-ին նա նշանակվեց Կովկասի փոխարքա։ Անդրկովկասը, Կովկասյան մարզը և Նովոռոսիյսկի երկրամասը հաջող կառավարելու համար 1845 թ. հունվարի 30-ի շնորհագրով Մ. Վորոնցովի լիազորություններն ընդլայնվեցին։ Նա իրավունք ստացավ սեփական իշխանությամբ լուծելու մինչ այդ մինիստրությունների իրավասությանը պատկանող հարցեր և, Նիկոլայ I-ին ծանուցելով, ընդունելու ցանկացած անհրա-

---

38 ЦГАОР, ф. 109, оп. 223, д. 9, Л. 147 об—150 об.

39 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 400, ց. 1, գ. 46, բ. 18—19, թ. 25։

40 ЦГИА СССР, ф. 1268, оп. 26, д. 7, 185—191.

41 ОПИ ГИМ, ф. 254, оп. I, д. 379, л. 300 об.

42 Վ. Ա. Միքայելյան, Նովակալ Ն. Մ. Սերեբրյակով, Երևան, 1979, էջ 116—125, 131—139։

43 РО ГБЛ, ф. 330/I, п. 80, ед. хр. 11, л. 88.

44 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 3, թ. 3, 3 հակ.։

ժեշտ վճիռը[45]։ Փոխարքային տրված արտոնությունները Մ. Պոզենը համեմատեց «ցարական իշխանության հետ»[46]։

Այսպիսով, ինքնակալությունը ստիպված եղավ օգտագործելու կառավարման պատմականորեն փորձված ձևը՝ Կովկասյան փոխարքայությունը (առաջին անգամ կազմակերպվել է 1785 թ.), երկրամասում իր սոցիալ-քաղաքական նպատակներն ըստ էության անփոփոխ պահելով հանդերձ։

Կայսերական քաղաքականության նոր փուլը կառավարմանը տվեց հետևյալ տեսքը. գլխավոր, նահանգային, օկրուգային և տեղական (գավառային, ուեղամասային, քաղաքային, գյուղական)։ Բարձրագույն կառավարումը կենտրոնացվել էր փոխարքայի հատուկ գրասենյակում։ Այն բաղկացած էր երկու բաժանմունքից, որոնք ունեին մինիստրական դեպարտամենտի իրավունքներ ու համապատասխան դրույքներ և գլխավորվում էին դիրեկտորի կողմից։ Գլխավոր վարչության պետին էր հանձնվել (1848 թ.) ընթացիկ գործերի վարումը՝ հատուկ գրասենյակի ենթագերատեսչական մասի հետ միասին։ Դրան կից մինիստրական դեպարտամենտի հիմունքներով կազմակերպվեց պետական գույքերի վարչություն[47], երկրամասի գծով բոլոր գործերը մտնում էին Կովկասյան կոմիտե։ Գերագույն հսկողությունն իրականացնում էր կայսրը, որը փոխարքայի հետ հատուկ նամակագրություն ուներ։

1846 թ. դեկտեմբերի 14-ին Նիկոլայ I-ը հաստատեց «Կովկասյան երկրամասի բաժանման մասին կանոնադրությունը»։ Ստեղծված չորս նահանգները՝ Թիֆլիսի, Քութաիսի, Շամախու և Դերբենդի[48], կազմավորվեցին կբռնատված կառավարման հիման վրա և անվանվեցին ըստ քաղաքների[49]։ 1840 թ. օրենսդրական որոշման վարչական ձևերը հարմարվեցին նոր խնդիրների լուծմանը։

Նշանակալից ուշադրություն էր դարձվում սոցիալական հարաբերություններին, որոնց բովանդակությունը պայմանավորված էր այստեղ գերիշխող արտադրության եղանակով։ 1845 թ. տվյալները հետևյալ պատկերացումն են տալիս Անդրկովկասի հասարակության կազմի մասին[50].

Սոցիալական պատկանելիությունը	Քանակը	Տոկոսը	Կրոնական պատկանելիությունը	Քանակը	Տոկոսը
բարձր դաս	43702	3,1	ուղղափառ	444425	31,6
հոգևորականություն	31547	2,2	լուսավորչական	236277	16,8
քաղաքաբնակներ	101713	7,2	կաթոլիկական	7633	0,5
մահմեդներ, նուքերներ և այլն	29120	2,1	լյութերական	1685	0,1
գերմանական գաղութաբնակներ	1680	0,1	աղանդավորական	12989	1
աղանդավորներ	12989	1	եբրայական	9509	0.7
գյուղացիներ	1185319	84,3	մահմեդական	693552	49,3
ընդամենը՝	1406070	100		1406070	100

45 «Архив князя Воронцова», т. 40, М., 1895, с. 498—500; ПСЗРИ, т. 20. отд. I, ст. 18679.

46 «Русский архив», кн. 3, 1876, с. 301.

47 ПСЗРИ, т. 20, отд. № 18706, 19230, 19706; «Свод законов Российской империи», СПб., 1857, т. 2, ч. 2, кн. 3, № 10, «Санкпетербургские сенатские ведомости», 31. I. 1850.

48 Քննարկվում էր Վրաց-հայկական նահանգի կազմակերպման հնարավորության հարցը։ Երևանի նահանգի կազմակերպումը (1850) հետաձգվեց կաթողիկոսի և Ի. Պասկևիչի հարաբերությունների լարվածության պատճառով։

49 ПСЗРИ, т. 21, отд. 2, № 20701; ЦГИА СССР, ф. 1268, оп. 26, д. 9, л. 490.

50 «Акты, собранные Кавказскою археографическою комиссией», т. 10, Тифлис, 1885, с. 834.

Տվյալները ցույց են տալիս[51], որ առավել մեծաքանակ դասակարգը գյուղացիությունն էր (84,3%)։ Քանակով երկրորդը քաղաքային բնակչությունն էր, սակայն արհեստավորների, վաճառականների և գյուղացիական ծագում ունեցողների քանակի մասին տվյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս դատելու այդ կատեգորիայի ներքին շերտավորման մասին։ Սոցիալական բուրգի գագաթը կազմում էին հոգևոր և աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչները (5,3%)։ Այսինքն, իշխանությունը պատկանում էր աննշան փոքրամասնությանը, այն ժամանակ, երբ անմիջական արտադրողների հսկայական մեծամասնությունը կառավարումից հեռացված էր։ Ըստ դավանանքի կազմը վկայում է քրիստոնեական և մահմեդական համայնքների թվաքանակի հավասարության մասին։ Կրոնական բաժանումը հիմնականում արտացոլում էր երկրամասի ազգային կազմը՝ վրացիներ, հայեր և ադրբեջանցիներ։ Վերջինիս բարձր խավի պահանջների անտեսումը (մյուս ժողովուրդների որոշ ներկայացուցիչների հետ միասին) կառավարությանը զրկում էր նշանակալից սոցիալական հենարանից և մասսաների վրա արդյունավետ ներգործելու հնարավորությունից։ Այդ պատճառով էլ 1846 թ. դեկտեմբերի 6-ին օրենք ընդունվեց «Բեկերի, մելիքների և աղալարների հողային իրավունքների մասին», որով նրանք դառնում էին ժառանգական հողատերեր այն հողերի, որոնց նրանց ընտանիքները տիրում էին նախքան մահմեդական մարզերի միացումը։ Աղալարներին ու մելիքներին էին վերադարձվում 1841 թ. նրանցից խլված հողերը, իսկ դրանց վրա բնակվող գյուղացիները ճանաչվում էին պետական։ Խաները, բեկերն ու աղալարները ճանաչվում էին երկրամասի մահմեդական բարձր խավ, իսկ մելիքները՝ հայերի։ Այսպիսով, մինչև ռեֆորմը գոյություն ունեցած հարաբերությունները վերականգնվեցին, իշխանության սոցիալական բազան ընդլայնվեց։ Սեփականության իրավունքով և գյուղացիության հետ ֆեոդալների ունեցած փոխհարաբերություններով զբաղվում էին Շամախու, Դերբենդի և Երևանի բեկական հանձնաժողովները։ Կատարվեց Վրաստանի, Իմերեթիայի և Գուրիայի բարձր խավի իշխանական ու ազնվականական տիտղոսների ստուգում[52]։ Շարունակվում էր նախկին Կասպիական մարզում հարկային սիստեմի վերափոխման և վրացական եկեղեցու կալվածքները պետական գերատեսչությանը հանձնելու նախապատրաստությունը։ Ավելի սերտ դարձան իշխանության փոխհարաբերությունները հայ լուսավորչական և շիա հոգևորականության ղեկավարների հետ[53]։

Այսպիսով, 1840 թ. Անդրկովկասում քաղաքացիական կառավարում մտցնելը ինքնակալության կայսերական քաղաքականության նոր շրջան էր, սակայն ռեֆորմն անտեսում էր երկրամասի ժողովուրդների քաղաքացիության աստիճանը և ազգային առանձնահատկությունները, որը պայմանավորեց նրա սահմանափակ-առաջադիմական բնույթը։ Կովկասյան փոխարքայության կազմակերպման նպատակը երկրամասի ներսում կառավարչական ապարատի կենտրոնացումն էր։ Կրճատված կառավարումը, իրավական ապարատի անփոփոխությունը և սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ժամանակ ժառանգականությունը վկայում էին Անդրկովկասը համապետական սիստեմով կառավարելու միտումը պահպանելու մասին։

---

51 Այստեղ, հավանական է, ներկայացվում են կամերալ ցուցակագրությունների ճշգրտված տեղեկությունները (նույն տեղում, հ. 9, մաս 2, № 520, էջ 604, 605)։

52 ПСЗРИ, т. 21, отд. 2, № 20672; «Санкгпетербургские сенатские ведомости», 2. I. 1851.

53 ЦГВИА, ф. 169, оп. 1, д. 4, л. 189—191; ЦГИА СССР, ф. 1268, оп. 4, д. 232, с. 10—13.

ВОПРОС ОБ УПРАВЛЕНИИ ЗАКАВКАЗЬЕМ (1840-е годы)

ВАЛЕРИЙ ТУНЯН

Резюме

Реформа по управлению Закавказьем от 10 апреля 1840 г. открыла новый период в имперской политике самодержавия в этой отдаленной окраине. Она затронула административно-территориальную, законодательно-судебную и финансовую стороны организации власти. Реформа предусматривала проведение соответствующих мероприятий в налоговой системе, в системе просвещения, в социальной и вероисповедальной сферах. Организация Кавказского наместничества в 1845 г. явилась результатом признания необходимости учета местных особенностей, а также централизации управленческого механизма внутри региона. Сокращение управленческого аппарата, неизменность правого статуса, преемственность в решении социально-экономических целей свидетельствуют о сохранении тенденции управления Закавказьем в общегосударственной системе.